

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հունիսի 16-ի ՀՕ-23 օրենքի 12-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունում վերջակետը փոխարինել ստորակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«դրոշմանիշային վճար:».

2) 2-րդ պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Սույն պարբերության դրույթը չի տարածվում դրոշմանիշային վճարի վրա:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Դրոշմանիշային վճար վճարողների շրջանակը, վճարի չափը, վճարի հաշվարկման, վճարման, գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև վճարի գծով արտոնությունները սահմանվում է «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-79-Ն